

Ճ ԾԻՆՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ¹⁾

Բ.

ՄԺՆԿԵՐԱՐ և նորա մասին պատմական տեղեկութիւն: ՄԺՆԿԵՐԱՐ ԲԵՐ
դի աւերակները: Քարափոր եկեղեցիներ. «Ալի տաշ», «Աղա բաբա» ուխտատե-
ղին «Ղըզլար դալա», վանքի տեղը, «Կուշխանա», Միդի խաշը, «Սաքսան վե-
րան», Սուրբ խաշ վանքը Թրին վանքի տեղը, Հանդատարանները: «Խոյ քեա-
սան» և «Հարսնթափ» գերեզմանատները: «Քիւմրա» մատուռը, Կիրակոս
փահլեանը, Ջերմուկի ժողովրդահանդէսները: Այրերո Աւերակ գիւղեր: Մըժն-
եկերաի և միւս թրքարեակ գիւղերի ներկայ բնակիչները:

1877 թուականի յուլիս ամիսն էր: Այդ ժամանակ իմ
ամբարնոցն էր Դարալագեազի Խաչիկ գիւղը: Այդ միջոցին
այդ տեղ էր և Ալէքսանդրապոլի գաւառի Ղփչաղ (Հառիճոյ
վանք) գիւղի բնակիչ Յակոբ Պետրոսեանը, որ պատերազմի ինչ
ինչ հանգամանքներից ստիպուած, առ ժամանակ հեռացել էր
դէպի Դարալագեազ, նա բնիկ Բասենու ՄԺՆԿԵՐԱՐ գիւղից էր
և 1830 թուից գաղթած: Սիրում էի լսել Ազո քէհի (այդ-
պէս նորա սովորական կոչումը) գաղթելու շրջանի երիտասար-
դական տպաւորութիւնները, որ գրի անցած մի օր լոյս կը-
տեսնի: Սիրում էի լսել նորա հասարակ և անպաճոյճ պատմած-
ները Բասենի և մանաւանդ ՄԺՆԿԵՐԱՐԻ կեանքից:

Երբ խօսքն անցնում էր ՄԺՆԿԵՐԱՐԻՆ, Ազո քէհան չէր
կարողանում սառնութեամբ պատմել: Նա հոգով յուզւում էր
և մտքով վերանում և մի անգամ արտասանեց լախ, աչքովս
կրկին տեսնէի ՄԺՆԿԵՐԱՐ և ապա Սիմէոն ծերունու նման ա-
սէի շարդ արձակեա զհոգիս ծառայի քոչ:

Այս խօսքերն այնքան խորը տպաւորութիւն արին իմ
գիւրապագայ սրտիս վերայ, որ յիշողութիւնիցս չէին հեռանում,
մինչև անգամ այս րոպէիս, Բազում, սոյն տողերը գրելու
վայրկեանին, կարծես առաջս դեռ ևս նստած է իմ պատուա-
կան Յակոբ Պետրոսեանը: Խաչիկում, Ազո քէհի մօրմօրի աղ-
դեցութեան ներքոյ ես երեակայում էի ՄԺՆԿԵՐԱՐ, բայց եր-
բէք մտքովս չէր անցնում, որ ճակատագիրը Պետրոսեանի

¹⁾ Լումայ 1903 № 6.

խօսքերից մի տարի յետոյ ինչ անձամբ կձգի Դարալագեաղից Բասեն, ուրեմն Մփնկերտ:

Պետրոսեանը մեռաւ, չարժանացաւ Մփնկերտի՝ կրկին տեսութեան, ըստ նորա դիւթիչ խօսքերը կախարդել էին ինձ և ես բռն տենչանքով ցանկանում էի տեսնել Պետրոսեանի տարաբաղո ծննդավայրը, որ անյայտ չէ նաև հայոց ազգի պատմութեան էջերում, տեսնել և կարելոյն չափ մանրամասն նկարագրել ի յիշատակ նորա յաւերժացեալ կարօտ որդոց, Պետրոսեանի, որին ես պարտական եմ նաև Բասենի գաղթի տեղեկութիւններով:

Պարաուրզանում ես արդէն մօտ էի Մփնկերտին և ուղիղ 1878 թուի մայիսի 25 էր, որ այց գնացի: Առաւօտը պատրաստի ձին մօտեցրեց կազակն և ինքն էլ ուղեկցեց: Իմ վրանից հարաւ անմիջապէս բարձրացայ լեռան գլուխը, անցայ Ալթըն Բուլաղ գիւղատեղի մօտով և կանաչների միջով աստիճանաբար ցածացայ: Դեռ ես հեռուից ես նկատեցի ամրոցը, շրջակայ բլուրները, սուրբ Խաչի դեռ ես ձիւնապատ գագաթը, լանջերի մայրի անտառները, ձորերի սիւնացած մերկ ժայռերը, առուակների հոսանքը և այլն:

Հայոց պատմութեան մէջ յիշատակում է Մփնկերտի անունը: Վրաց Թաւար Թագուհու օրով, ժբ. դարու վերջերում, հայազգի եղբարք Զաքարէ Սպասալարն և Իվանէ Աթաբէգն, ընդարձակելով վրաց տիրապետութեան սահմանները, հասցրին նորանց Բարկուշատից մինչև Մփնկերտ¹⁾։ Կիլիկիոյ Սիս քաղաքի ժողովի նիստին, 1307 թուին, Անաւարդի Գրիգոր կաթողիկոսի առաջարկութեան առիթով, մասնակցում էր 41 եպիսկոպոսների շարքում և Վիրակոս եպիսկոպոս Մփնկերտոյ²⁾։ Մփնկերտ կոչումը ծագում է ոմն Մաթանի անունից, որ Հայր Ալիշանի հաւանօրէն կարծիքով պէտք է լինի Արտաշէս Բ. որդի Մաթան քրմապետը³⁾։

Այժմեան Մփնկերտը, 6476 ֆուտ ծովից բարձր, դրուած հիւսիսից հարաւ ձգուող մի հովտի մէջ, Բայլի սուլ (բէգի ջուր) անուն առուի երկու ափերում Սա միանում է արեւելեան կողմում Զրզաւ առուի հետ, որ հոսում է նոյնանուն քարակոշիկ ձորակի մէջ և ապա հարաւում, 6—7 վերստից յետոյ կորչում են Արաքսի հոսանքի մէջ: Առուների միացման տեղում լարձ-

¹⁾ Ստեփ. Օրբ. Պատմ. նահ. Սիսական. հ. Բ. գլ. Կգ. 137:

²⁾ Զամչեան հ. Գ, 310: ³⁾ Ալիշան. Այրարատ. 38:

բացող բերդապսակ ըլլորի լանջերում ընդարձակօրէն սփռուած են նախկին, պատմական Մօնկերտի ցիրցան փլատակները: Սոցա ընդարձակութիւնը այլ և եօթը լայնածոց հանգստարանները գաղափար են տալիս անցած, գնացած Մօնկերտի մեծութեան վերայ:

Աւերակների մէջ կեդրոնական տեղ գրաւող վերոյիշեալ երկարաւուն ըլլորն իւր գաղաթի վերայ պահել է սրբատաշ քարից կերտուած մի բերդ, որ այժմ բայբայուած նայում է իւր անցեալ փառքի վերայ: Հարաւից բարձրանալով, հանդիպում էք կամարակապ դարբասին և այն կողմ աստիճանաբար դէպի վեր հարաւային պատին կից շեմից անցած, մտնում էք ամրոցի ներսը: Հեմից վեր, արտաքուստ, բերդապատի վերայ, այլ և բերդի արեւելեան ծայրում, սև քարի վերայ նշմարելի են մի մի ընդարձակ արձանագրութիւն խնամքով փորագրած, սակայն ինձ անհասկանալի, ըստորում նորանք, չգիտեմ, արաբի թէ թուրքի լեզուով էին:

Արեւելից արեւմուտ ձգուող և աստիճանաբար լայնացող քերդի երկարութիւնն է 300 քայլ, իսկ աւելի ընդարձակ ծայրի (արեւմտեան) լայնութիւնն է 26 քայլ: Ամրապինդ պատերի հաստութիւնն է 8 արշին և սորանց վերայ կան մարտկոցներ և պատի պահարաններ (դօլաբ): Երևում են արդէն աւերակ դարձած շատ տներ, որոց թուում, բերդի արեւմտեան ծայրում, մինը փորած է ամբողջ ժայռի մէջ: Երկու են ջրամբարներն, երկուսն էլ ամբողջ քարից փորած, մինը մաշնած, խանդաբուած, իսկ միւսը դեռ ևս մնայուն, երկարութեամբ 10 քայլ, լայնութեամբ 6 քայլ, 5 քարէ աստիճանով:

Հարաւում իջնում է դէպի Զըզաւ առուն գետնափոր կամաւրածածկ գաղտնի ճանապարհ, մասամբ բայբայուած պատերով, և նորա ներքի բերանը բացում է ժայռի ձեղքուածի մէջ, անմիջապէս ջրի ափին: Վերին Մօնկերտից քարէ խողովներով ջուր է բերուած բերդի մէջ և այժմ խողովները գիւղացոց տըների պատերումն են: Հեմից բարձր, դէպի արեւելք, մի նեղ ճանապարհ ժայռի տակով տանում է նեղ տափարակ տեղ նոյն բերդաժայռի վերայ, որ կոչւում է Ղութուղ ղալալ:

Այժմեան Մօնկերտի թուրք բնակիչները հաւատացած են, և ինձ էլ հաւատացնում էին, որ բերդը շինել է Ճինիլի-դի ղրալը (Թաղաուրը), պատերազմել է Ալի իմամի (մարգարէ) հետ, յաղթուել է սորանից և այլն: Բայց սոյնպիսի առաս-

պելներով պնտամենայնիւ չէ բացատրուում բերդի անցեալը և նա մնաց ինձ անյայտ:

Իջնելով բերդից, ցննեմք նորա լանջերը, որ կազմուած են ժայռերից և սոցանից պոկուած՝ գլորուած մեծամեծ բեկորներով:

Ջարմանալ արժանի է հին ժամանակների մարդկանց համբերութեան, աշխատասիրութեան և տոկունութեան վերայ, որ մտնելով բարափի սիրտը, փորել են այն տեղ եկեղեցիների, աներ և բազմաթիւ այրեր:

ՄԺնկերտի հնութիւնների կարգում արժանաւոր տեղ կարող են զբաւել բարափների մէջ փորուած եկեղեցիները, որոնք ցրուած են բերդի արեւմտեան լանջում: Ահա ձեր առաջ կանգնած է ժայռի մի ահագին բեկոր պոկուած ընկած բերդի բարձրութիւնից: Մուրճով զինաւորուած ձեռքը փորել է դորա մէջ մի եկեղեցի իւր դռնով, լուսամտով, աւազանով և բեմով: Երկարութիւնն է 8, իսկ լայնութիւնը 5 բայլ:

Սորանից 10 բայլ հեռու կանգնած երկրորդ եկեղեցին, նոյնպէս բեկորի մէջ փորուած, 8 բայլ երկարութեամբ, 5 բայլ լայնութեամբ: Երկու լուսամուտներից մինը միակ հարաւային մուտքի վերեւն է, միւսը բեմի կամարի տակ: Աւազանը հիւսիսային պատի մէջն է. կէս արշին բարձրութեան բէմը միայն աջ կողմից ունի երկու աստիճան, իսկ ձախակողմեան որմնափակ սիւնի ճակատին կարդում ենք այս արձանագրութիւնը, «Թիշատակ է սուրբ թաչ երազոկչին հոգւոյն»: Թիւ չկայ: Արձանագրութեան վերը փորագրած է երկու թաչ: Տանիքը կամարաձև է և նոյն բեկորից. սակայն այս եկեղեցին լայնութեամբ տանիքից մինչև յատակը, որ նոյնպէս նոյն բեկորիցն է, ձեղքուած է և ձեղքի կողքերը իրարից բիչ հեռացած:

Տեղական բնակիչ թուրքերը, որ բոլոր ժամանակ ուղեկցում էին և ամենայն պատրաստականութեամբ ցոյց տալով բոլոր նշանաւոր տեղերը, հաղորդում էին ինձ սորանց հետ կապ ունեցող աւանդութիւնները, սոյն այս եկեղեցին անուանում էին Այի դաշ և պատմում էին, որ հաղարթ Ալին, մեծ մարգարէ Մհամմադի փեսան, պատերազմ յայտնելով ՄԺնկերտ նստող Ճինիվիլ թագաւորին, հալածել է սորան և սա անձապաշտպանութեան նպատակով պատսպարուել է Ալիդաշի մէջ, որտեղից, չնայելով հաղարթ Ալու համոզիչ խօսքերին, չէ կամեցել ելնել: Հաղարթ Ալին վերջին ծայր համբերութեան

հասած, այլ ևս չէ կարողանում տանել յանդուգն ճինիվիդի յամառութիւնը, իւր զիջողար թրի մի հարուածով ճեղքում է վերից վայր, որից ծագում է Ալիգաշ կոչումը:

Հէնց այս պատերազմի մէջ, հաղթած Ալու զինուորներից մինը-Աղա բաբա անունով, գլխատում է ճինիվիդի թագաւորի զինուորից և գլխատում զինուորն, առնելով թէի տակ իւր գլուխը, դնում է Զրգաւ գետակի ձախ եղրից բարձրացող ահա այն լերան գագաթն, ընկնում և մեռնում է: Նորա միաշար քարակոյտ գերեզմանը զիարարթ է (ուխտատեղի) հիւանդների, չապրող երեխանց և չբերք կանանց համար, որոնք մի գեղեր մնալով Աղաբարայի գերեզմանի մօտ հասնում են մուրազին:

Ալիգաշից ոչ հեռի կանգնած է երրորդ բեկորաշէն եկեղեցին երկու բեմով, բաժանուած իրարից միջնապատով: Ելնելու աստիճանը ուղիղ մէջ տեղումն է, իսկ աւազանը հիւսիսային պատում: Կամարածն առաստաղը դեռևս կանգուն լինելով, արևմտեան պատը բոլորովին ջարդուել թափուել էր: Սորա մեծութիւնը հաւասար է նախնիքների մեծութեան և այս երեւոյթը շատ հետաքրքրական է, այսինքն որ բոլոր երեք եկեղեցիների մեծութիւնը նոյնն է:

Բերդի հարաւային և արևմտեան լանջերում, բեկորների մէջ, շատ կան այսպիսի շինութիւններ, արդէն մաշուած, ջարդուած, փշրուած, որի պատճառով դժուար է որոշել թէ եկեղեցի են նոքա եղել՝ թէ բնակարաններ: Այսպիսի փշրուած շինութեան մի պատ, արդէն ծակուած, մինչև այժմ կանգուն է մնացել գերեզմանատնում և բժշկի դեր է կատարում Մփնկերտի բնակիչների կրօնացաւ և հաղունեցող երեխանց համար, որոնք ճեղքուածից աշուձախ անցնելով աղատում են ցաւից:

Թիշեալ բեկորները դարերի ընթացքում, շարժից և այլ պատճառներից պոկուել վայր են ձգուել, անշուշտ բերդասարի ժայռից, ուպիսի անկումն պատահում է և ներկայ ժամանակում: Հէնց 1877 թուին այդպիսի մի ահագին բեկոր, իւր աւագին ճայթիւնով, մեծ սարսափ ազդելով, բնակիչների վերայ, պսկուել, գլորուել, կանգնել է գիւղի արևմտեան սահմանում:

Բերդի հարաւում, առուի ձախ կողմէն բարձրագիւր ժայռի մէջ շինած է չորրորդ փորածոյ եկեղեցին, արևմտեան պատն իւր դռնով արդէն ջարդուած, իսկ աստիճաններով ելնելի բարձր բեմի վերայ բնական ժայռից հանած վեմբարը

իւր երկու կողմի պատուհաններով սկիջք բազմեցնելու համար, կանգուն է դեռ ևս, Եկեղեցու երկարութիւնն է 7, իսկ լայնութիւնը 5 քայլ:

Սորանից երկու քայլ հեռու կան երկու փորածոյ տնակ 5 քայլ լայնութեամբ և երկարութեամբ, յատակի կենդրոնում մի փոս, գուցէ կրակատեղ ըլլարսի դնելու: տնակներից մինը խորտակուած է: Եկեղեցուց վեր, քիչ հիւսիս, մի անմատչելի տեղ, երևում է այր, արևմտեան դռնով և լուսամտով: Գուցէ, եկեղեցու դռնից ժայռի ճակատով աստիճաններ լինէին իւր ժամանակին, որ այժմ անհետանալով անմատչելի է դարձել պարը, որ մինչև անգամ Մօնկերտցիք երբեք չեն բարձրացել նորա մէջ: Սակայն նոքա հաւաստիացնում էին ինձ, որ նա իրօք այր չէ, այլ եկեղեցի է, և եթէ այսպէս է, ուրեմն նա կլինի հինգերորդը:

Ջրգաւի ձորում, որ տեղացի թուրքերն անուանում են Ջրգաւ դարայ, գետակի աջ ափի մօտ, բարձրագոյն ժայռու լերան լանջում փորած է մի եկեղեցի, երկարութեամբ 7, լայնութեամբ 4 քայլ: Հարաւային շարովի կրաշաղաղ պատն արդէն կիսով չափ խոնարհուած է: Պարմիր ու կանաչ գոյներով նկարած հրեշտակները դարդարում են բեմի առաստաղի ճակատը, իսկ բեմի կամարաշէն առաստաղը ներկայացնում է նոյն գոյներով նկարած կիսամաշ Հայր Աստուծոյ պատկերն, աթոռի վերայ բազմած: Հիւսիսային ժայռակալով պատում մի պատուհան, գուցէ աւազան, և նորանից վեր, առաստաղի տակ, բացւում է մի խորշ:

Սորան անմիջապէս կից և դռնով միացած կանգուն է փորածոյ սենեակ 7 քայլ երկարութեամբ և 5 քայլ լայնութեամբ, հարաւային շարած և այժմ խոնարհուած պատով: Հիւսիսային փորածոյ պատի մէջ կան մինչև 10 հատ փոքր պահարաններ, որոնց ես անուանում եմ պատուհան (դուար): Այս սենեակը հաւանականօրէն պէտք է լինի գաւթի կից եկեղեցուն: Միասին սոքա տեղացիների լեզուով կոչւում են Ղզլար Ղալայ (աղջկանց բերդ): Սա ինձանում կլինի ուրեմն վեցերորդ եկեղեցին:

Սոյն գաւթի հիւսիսային պատին կից, 4 քայլ սորանից բարձր դերբով, բոլորովին ժայռի մէջ փորուած է մի այլ եկեղեցի իւր բեմով և արևմտեան դռնով, լայնութեամբ 4, երկարութեամբ 6 քայլ, որ կլինի եօթներորդ եկեղեցին:

Վերջին եկեղեցուն կից, նորա մուտքի առաջ կան երկու կից փորածոյ սենեակներ, 7 և 5 բայլ մեծութեամբ իւրաքանչիւրը, փոքրիկ լուսամուտով միջնապատի մէջ իրար հետ միացած. առանձնակի մուտքով հարաւից, պատերի մէջ փոքրիկ պահարաններով և յատակի կեդրոնում մի մի փոսով, որ կըսկատեղի է նման, Սոցա կից կան ևս երկու պսպիսի սենեակներ, բայց արդէն բայքայուած: Հաւանօրէն սոքա խուցեր են:

Ղզլար զալայի մասին ինձ ուղեկցող ՄԺնկերացի թուրքերը պատմում էին հետեւեալ աւանդութիւնը: Ժինիվկցի ՄԺնկերում զրալի Ժամանակ, նոյն զիւղացի մի երիտասարդ սիրահարուելով մի օրիորդի վերայ, բացասութիւն է ստանում վերջինիս հօրից և ապա փախցնելով աղջկանը, գալիս են պստեղ և շինում են այս սենեակներն ու ծածուկ: Բնակւում նորանց մէջ: Աղջկայ հայրը, շատ որոնելուց յետոյ, վերջապէս իմանում է աղջկայ տեղը, մի քանի մարդկանց մասնակցութեամբ գալիս է Ղզլար զալայ, սպասում է երիտասարդին, որի արիւնթաթախ դիակի վերայ նետուելով՝ աղջիկն արիւնոտում է իւր ձեռքերը: Ապա հօր սրի տակ սպանուող աղջիկը, յուսահատ սարսափի մէջ, արիւնոտ ձեռքերը դիպցնում է պատին և ներկում սորան (Հայր Աստուծոյ պատկերը): Երկու սպանուածների մարմինը թաղուել են այն խորշի մէջ, որ յիշուած է վերը, վեցերորդ եկեղեցում, որը բարձրութեան պատճառով ես չտեսայ, և ուր ուղեկիցներէս հաւատացնելով կան երկու շիրմաքար:

Ղզլար զալայից 50 բայլ ցածր, նոյն Ժայգի մէջ կայ փորածոյ եկեղեցի, ութերորդը, 6 և 3 բայլ երկարութեամբ և լայնութեամբ, բեմով, երկու լուսամուտով և մի դռնով: Սորա հարաւային պատին կից և մի լուսամուտով իրար հետ միացած կայ ևս և մի եկեղեցի, որ արդէն բայքայուած է: Սա ինններորդն է: Առաջին եկեղեցու բեմի առաստաղի ծակատում երեք փորագիր թաւ, իսկ բեմի արեւելեան պատի վերայ կայ կոպիտ տառերով արձանագրութիւն, բայց անորոշելի:

Սորանց մօտ վաղում է սառնորակ աղբիւրը:

Բերդից հիւսիս, քառորդ վերստաչափ հեռաւորութեամբ, նեղ Ժայռոտ կիրճի բերանում, Բայլի առուակի ձախ կողմում, երևում են աւերակ փոքր եկեղեցու հետքեր՝ հիմնապատերով, սրբատաշ քարերից, մի բեմով և երկու աւանդատներով: Սա արդէն տասներորդ եկեղեցին է:

Սորա շուրջը կան խցերի և տների աւերակներ, և այդ տեղը կամ ժայռը կոչուում են վանքի տեղ, վանքի ժայռ են:

Վանքի մօտ բղիւում է մի յորդ և առատ աղբիւր, որի մասին ուղեկից Մփնկերտցի ծերունի Մամադ. Կադիր օղլին հաղորդեց, որ այս աղբիւրը բերել է խոլովներով, հետուից, 1825 թուին, նախ քան Մփնկերտի հայոց գաղթը, նորանց ծխատէր քահանայ Տէր Յակոբը:

Նոյն Մամադը, որի անունն այստեղ զոհութեամբ եմ գրոշմում, ըստ որում իմ ուղեցոյցներից գլխաւորընա էր և այս բոլոր տեղեկութիւնների և աւանդութիւնների համար նորան եմ երախտապարտ, յայտնեց, որ այս եկեղեցին մեծ ուխտատեղի է, ինչպէս և միւս հայկական ուխտատեղիները, Թուրքերի համար, և օգնում է ոսկրացաւից, յօդուածացաւից և այլ տեսակ հիւանդութիւններից: Նորա պատմելով, Մփնկերտցի Հիւսէին Թումալի օղլին, 20 տարի առաջ, յանդգնեց քանդել վանքի պատերը, նորա քարերով իւր համար առն շինելու: Սողանլուի անտառում Հիւսէինն ընկաւ ծառի տակ և ջախջախուեց: Նորանից յետո, մեռան և նորա գերգաստանի միւս անգամները: Նորերումս մի Թուրք նոյնպէս վերցրել էր մի քանի քար, բայց վանքը նորա վերայ, երազում, այնպիսի մի սոսկումն էր ձգել, որ առաւօտն իսկոյն յետ բերաւ քարերը: Մեծ է վանքի զօրութիւնը, կրկնում էր Մամադը:

Մփնկերտից $\frac{3}{4}$ վերստաչափ հեռու Միլլի դիւզի ճանապարհի վերայ, ժայռի մէջ փորած է մի եկեղեցի իւր բեմով, դռնով և լուսամտով, 7 և 5 քայլ երկաւութեամբ ու լայնութեամբ: Սա տաանեմէկերորդն է: Սորա աջ և ձախ կողմում, այլև արեւելեան կողմում, կան փորած մի մի սենեակ իւրեանց լուսամտով և առանձնակի մուտքերով: Մինի մեծութիւնն է 5 և 5 քայլ, միւսներինը 3 և 2 քայլ: Իւրաքանչիւրի մէջ կան յատակում մի մի գերեզման, դատարկ և առանց շիրմաքարի: Հաւանական է, որ այս գերեզմանները դիտմամբ քանդած լինին շահի նպատակով:

Հինգ քայլ սորանից հեռու սկսւում է երկար անցք 9 քայլ երկաւութեամբ և 3 քայլ լայնութեամբ, մի կողմի պատը շարովի: Անցքի միւս ծայրում բացւում է մի փորածոյ սենեակ, մի լուսամտով և 4 քայլ լայնութեամբ և երկաւութեամբ: Կայ և մի այլ սենեակ, արդէն քանդուած, որի մօտ երեւում է խոլովներից հիւսած ջրի ճանապարհ, սակայն ջուրն անհետագեւ է:

Այս շինութիւնները տեղացիներից կոչուած է Կուշխանայ (Թոնանոց) ըստորում վայրի աղանիները ձմեռային ցրտից պատսպարուած են նորանց մէջ:

Մշակերտից արեւմուտ, երեք վերստաչափ հեռու Թուրքաց լեզուով Միղիչ խաչ սարի վերայ, Ձինար քլիսա գիւղի աւերակների մէջ, մնացել են մի եկեղեցու հիմնապատերը, որ կլինի տաաներկուերորդ եկեղեցին:

Սորա մօտ է, սարի գագաթին և մի ուխտատեղի Թուրքերի համար, Միղիչ խաչ անունով, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ահագին խորանարդ քար կիսով չափ հողի մէջ տնկած:

Կագիր օղլի Մամմադը պատմում էր, որ հին ժամանակներում Մշակերտում եղել է մի հայ, Միգիչ (երևի Մկրտիչ) անունով, որին ամէն մի երեխայ իւր համադիւղացիներից վայր ձգելիս է եղել նորան՝ նորա անգօր և թոյլ լինելու պատճառով: Այս մասին Միգիչը շատ լալիս է եղել: Մի ալեւոր գիշերն, երաղում, երեւոյով նորան, յայտնում է, թէ տալիս է, նորան կարող ոյժ և ցոյց է տալի խորանարդ քարը: Առաւօտեան Միգիչն ի դարմանս ուրիշների թեի տակն է առնում այդ ահագին խորանարդն, իբրեւ մի թեթեւ քար, և տանում տընկում է սարի գլխին, որից և սարը կոչուած է Միղիչ խաչինքը մեռել է Մշակերտում:

Մշակերտից հարաւ կայ մի այլ ուխտատեղի, Սաքսան վերան (եթեանասուն տուող) սարի վերայ, ուր կայ մի հատիկ դերեզման, շրջապատած սրբազան մայրի ծառերով և այնքան սրբազան, որ ոչ ոք չի վստահանալ մի հատ ճիւղ կտրել ծառերից, ապա թէ ոչ Ալեքսանդրացի հայի նման կպատժուի, որ մի առանցք կտրելու համար, տուն չհասած, երկու եզն էլ սատակում են: Սարի լանջում ցանել են մի կող (չափ) սիսեռ և ստացել են 70 կող, դորանից էլ սաքսան վերան անունը:

Մի ժամ ճանապարհ այս տեղից հեռու է սուրբ խաչ եկեղեցին, Սողանլուի մի գագաթի վերայ, որի մասին յիշատակութիւն եղաւ վերը:

Սորա մասին Մամմադն աւանդում էր թէ՝ սուրբ խաչ վանքն իւր ժամանակին ունեցել է 366 գիւղ. վանքի քահանան մատակ ձի հեծած, տարուայ առաջին օրը այցելութեան էր դուրս գալիս վանքից և իւրաքանչիւր գիւղում միայն մի օր մնալով, տարուայ վերջին օրը հասնում էր վանքը: Մահուան րոպէին քահանան խոստովանել է, որ ինքը մեռնում է ոչ քաղ-

դից և ոչ ծարաւութիւնից, այլ սարերի գրտերից: Տարուայ առաջին օրը քահանայի մատակը ծանրանում էր, իսկ նորից վանք վերադառնալու օրը վանքումն արդէն ծնում էր:

Աերոյիշեալ նկարագրութիւնից դժուար չէ ենթադրել, թէ ինչքան մեծ բազմութիւն է եղել՝ Մժնկերտում և նորա շրջակայքում, թէ աշխարհիկ և թէ հոգեորական մարդկանց, որ մի ամփոփ տեղում արտադրել են լազմաթիւ մատուռներ և եկեղեցիներ: Եթէ մի թուուցիկ ճանապարհորդութեան ժամանակ ես կարողացայ զննութեան առնել աւելի քան 13 մատուռներ և եկեղեցիներ, հապա ո՞րքան կլինէին և այնպիսիները, որոնք անհետացել են կամ սպրդել են ալքիցս և որոնց յայտնագործելու և նկարագրելու համար հարկաւոր էին աւելի քան ամիսներ: Եթէ մի ամփոփ տեղի համար, որպիսին Մժնկերտն է, թուրք տարրը հայ տարրի մասին կարող էր պարզան աւանդութիւններ հաղորդել ինձ մի օրում, հապա որքան առաւել տեղեկութիւններ և աւելի երկար ժամանակ կարող էր աւանդել հայ տարրը: Երևում է, որ հայոց ազգի պատմութիւնը համարեա՞ ոչինչ չէ՝ աւանդում մեզ, որ ուղղակի վերաբերուէր Մժնկերտին:

Այդ պատճառով էլ մի որևէ պատմական տեղի կամ անցքի մասին վերջին ժամանակի հետեւողները շատ անգամ լուկ ենթադրութիւններին են դիմում: Չամչեանի պէս հայոց պատմութեան ծանօթ մարդը Մժնկերտը դնում է Ախուրեան գետի մօտ ¹⁾, Ինձիճեանի և Ալիշանի պէս հնագէտները «հաւանական» են օրէն, բառն են յաճախ առաջ բերում ակամայից:

Օրինակ, տասներորդ դարու վերջում, Կարուց Աբաս Թագաւորի մայրն, Ասողեկի վկայութեամբ, չզվարս կրօնաւորութեան յանձն առեալ՝ երթայ բնակէ ի տեղին, որ Թրին վանք կոչի. զի են եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի ընդդէմ հաւաւոյ. և աղօթից և գործոց բարեաց պարապեալ և հոգեւոր առաքինութեանս: ²⁾

Ահա այս Թրին վանքի տեղն այժմ յայտնի չլինելով, Հ. Ալիշանը, Ինձիճեանի և Կիւրեղ վարդապետ Սրապեանի կարծիքներին համաձայն, հաւանականօրէն ընդունում է, որ լինի Բիւլի գլխի սուրբ Խաչի շրջակայքում, որովհետեւ վերջինս փորածոյ է: ³⁾

¹⁾ Չամչեան, պատմ. հ. գ. «Ցանկան. մարդկան և քաղաքաց.

²⁾ Ստեփ. Տարօնեցի. պատմ. Բ. հանդէս. գլ. ԺԷ. էջ 198.

³⁾ Հ. Ա. Ալիշան «Այրարատ, էջ 38.

Եթէ պղպէս է, հապա չէ՝ կարելի ենթադրել, որ Թրին վանքը ՄԺՆԿերտի մօտ լինի, որ հետեւ չէ սուրբ խաչից, ունի բազմաթիւ փորածոյ եկեղեցիներ, վերջապէս Զգաւ առուի ափում ունի աւերակ գիւղատեղի Թունգուլի անունով, որ փոքր ինչ մօտենում է Թրին բառին:

Թողնելով այս ենթադրութիւնը, կրկին անցնում եմ հետազոտութեանց թելին: Ինչպէս վերը յիշած է, ԵՕԹը լայնաշիւստ հանգստարանները ՄԺՆԿերտում կազմում են ոչ պակաս նշանաւոր երեոյթ: Նորանց բարերն ըստմեծի մասին օրօրոցաձե են և մեծագիր, կան նաև ձիաձե և խոյաձե, դէմքերը դարձրած դէպի արևմուտ: Տեսայ և մի հատ կողքի վերայ կանգնած քար, որի ճակատի ուռուցիկ նկարը ներկայացնում է փողահարն զոռնալիս բերանում փչելիս, միւսը շամփրով խորովածը և գինու բաժակը ձեռքերում բռնած, երրորդը՝ միայն բաժակը ձեռքին խկ չորրորդը՝ ծառան թւեքը կրծքին դրած՝ համեստ նայում է: Դարալագեալը շատ ունի պատկերազարդ տապանաքարեր, որոնց վերայ զուարճասէրը միշտ սաղով և ջութակով է նըստում, իսկ զոռնալիսը երբէք:

ՄԺՆԿերտի տապանաքարերը խիստ ժլատ են արձանագրութիւններով: Միայն երկու քար են կրում գրութիւն: Մինը բերդի հարաւային ծայրի գերեզմանատանը Վյս տապան հանգստեան թոխտացի մահտեսի Արրահամին, որ հանգուցեալ առ Քրիստոս Աստուած: Միւսը Զրգաւ առուի ձախ ափի հանգըստարանում Վկալմեցաւ խաչ ձեռամբ ներկարար Սարգիս ի բաբեթութիւն ծնողաց իմոց:

Իւրաքանչիւր գերեզմանատան մէջ կան մի կամ երկու խոնարհուած մատուռներ և սոքա, թէ առաջ և թէ պիտմ, ուխտատեղի են թուրքերի համար: Ցնորուած հիւանդներին մի գիշեր պահելով բերդի հարաւային կողմի գետափինեայ գերեզմանատան քայքայուած մատրան մօտ, հիւանդն առողջութիւն է գտնում և գերեզմանատունը կոչւում է տեղական լեզուով Խոյ քեասան մագարլիք. (ցնորմունք կտրող հանգստարան):

Սորա և բերդի հարաւային ծայրի միջև գտնուած գերեզմանատունը թուրքերն անուանում են Վչարսընթալի: Այս հայկական բառի ծագումն և նշանակութիւնն ես չկարողացայ իմանալ:

Բերդի արևելեան ստորոտում, Զրգաւ չայի աջ ափի բարձրադիր տափարակի վերայ սփռուած հանգստարանում, կանգ-

նած է մի բոլորչի արբատաշ գմբեթայարկ շինութիւն Տինգ Հատ միաջափ և միանման պատուհաններով իւրեանց ծաղկանման քանդակահիւս շրջանակներով: Կամարակապ առաստաղը ներսից և դրսից գեղեցկահիւս քանդակագործ ծաղիկներով զարդարուած է: Նոյնը և դրան շրջանակի վերայ: Տանիքի մի մասը քանդուել է 1840 թուի շարժից: Մուտքն երեք աստիճանով տանում է ներս և դածր մինչև յատակը, որ ամբողջ հարթած ժայռ է: Յատակում, իրար կողքի, կան բարի մէջ փորած երկու բազ գերեզման մարդոյ ոսկրներով, իսկ սոցա անդիր տապանաբարերը շրջած ձգած է նոյն մատուռի մէջ: Մատրան տրամագիծը տասը բայլ է: Չկարողացայ իմանալ թէ ով է բացել գերեզմանները և կամ ի՞նչ են գտել նորանց մէջ, ներքուստ, պատերի բարերի վերայ, տեղ տեղ փորագրած է հայկական Տ տառը:

Տեղական թուրքերը մատուռն անուանում են *Բիւմբալթ* այսինքն գմբեթ և պատմում են հետեւեալ աւանդութիւնը: Այս զոյգ գերեզմանների մէջ թաղուած են Մժնկերտի Ճինիվիլցի այն զրալի (Թափաւորի) տղան ու աղջիկը, որ պատերազմ ունեցաւ հալլաթ Ալու հետ: Նախ մեռել է տղան, Ապա հիւանդ աղջիկը խնդրել է իւր հօրը, որ մեռնելուց յետոյ թաղէ այնպիսի մի տեղ, ուր օձը չկարողանայ մօտենալ նորան և չուտէ նորա լեզուն: Թագաւոր հայրը կատարելով աղջկայ խնդիրը կախել է նորա մարմինը զամբիւղի մէջ քիւմբաթի առաստաղի օղից, որ միքանի տարի առաջ դեռ ևս կախուած էր: Խորամանկ օձը այնուամենայնիւ կարողացել է սողալ զամբիւղի մէջ և ուտել օրիորդի լեզուն: Այս լինելուց յետոյ՝ աւելորդ են համարել թողնել նորան զամբիւղի մէջ, ուստի իջեցրել են և թաղել միւս գերեզմանում, եղբօր մօտ:

Երբ դեռ ևս Մժնկերտի հայ բնակչութիւնը չէր գաղթել, իւրաքանչիւր տարի, զատկի տօնին, հայերը և թուրքերը միասին ժողովում էին մատուռի շուրջը, հայ և թուրք օրիորդները երիտասարդների հետ, զուգնայի նուագածութեամբ, պարահանդէս էին բռնում, իսկ ժողովրդի խումն բազմութիւնը հացկերոյթով և զբօսանքով էր զբաղւում: 1830 թուից այս կողմ, հայերի գաղթելուց յետոյ, վերացել է այդ սովորութիւնը:

— Ափսոս մեր հայեր, որ հեռացան, մեզանից, պատում էր Մամադը. նորանք հեռանալով, գիւղի խէր ըարաքնաթն էլ հետները տարան: Եղբօր պէս էինք ապրում հայերի հետ. մեր մեծերը շատ խնդրեցին նորանց յետ կանգնել գաղթելու:

մտքից, բայց իզուր... էլի չէին գաղթիլ նորանք, շատերն ա-
կամայ գաղթեցին և այդ բոլորի պատճառն էր ղալի ճայթա
այն ժամանակի զօրքը, որ շատ նեղութիւն էր տալի ամենիս,
բայց առաւել Տայերին, տանում էին սիրուն հարսներ, սիրուն
աղջիկունք, ամէն տեսակ իրեղէններ, մի խօսքով, ինչ հաւանում
էին, ինչ աչքերը տեսնում էին, այն էլ անարգել տանում էին,
ոչ ոք չէր համարձակիլ դէմ կենալ...

--Հայերի ժամանակ, շարունակում էին Մամլադն և միւս-
ները, Մժնկերտն այսպէս 10 տանից աղքատ փոքրիկ գիւղ
չէր, մեծ գիւղ էր, քաղաքի նման, դուքան, բազար, առևտուր...
ամէն բան լի, առատ, ամէն բանի անկարօտ, օտարների համար
հիւրասէր, միայն Կիրակոս փառլեւանը բոլորիս արժէր...
Մինչև անգամ անծանօթ, պատահական ծանապարհորդին Կի-
րակոս փահլեանը նահապետական ձևով հայհոյելով, բերում
նստացնում, ուտեցնում, խմեցնում էր ու ծանապարհ ձգում:

—Ո՞վ չգիտէր, ո՞վ չէր ծանաչում Կիրակոս փահլեւանին,
ո՞վ չէր լսել նորա անունը, նորա ղոժը, նորա հիւրասիրութիւ-
նը, ամբողջ Բասենում յայտնի մարդ էր, շարունակում էր
Մամլադը. Մժնկերտի 50 տան հայերի մէջ ամենից առաջաւո-
րը նա էր: Իբրև փահլեւան Բասենում ոչ ոք չէր կանգնում
նորա դէմ: Ձերմիւլի (Ջերմուկ, տաք հանքային աղբիւր) խա-
ղահանդիսումն էլ նա առաջին տեղն էր զրաւում: Այդ իստի
սու աղբիւրը (տաք ջուր) որ մենք Ձերմիւլը ենք անուանում,
գտնւում է Ջուինից հարաւ, Խան չայի ձախ ափում, յայտնի է ե-
ղել շատ շատ առաջ, ճինիվիզների դրախներից էլ, հազրաթ
Ալուց էլ շատ առաջ, ինքն այժմ մեծ զիարաթի տեղ է (ուխա-
տեղի) թէ հայերի և թէ թուրքերի համար. ունի աւաղան,
ունէր և տուն, բայց անցեալ տարի ոռւսի ասկեարը քանդեց
և փայտը վառելիքի գործ դրեց:

—Իւրաքանչիւր տարի, երեք անգամ, մայիսի 7, 14 և
21 ին հաւաքւում են Ձերմիւլը՝ Բասենի ամեն կողմերից և ա-
մեն ազգութիւններից, մատաղ են մօրթում, հացկերոյթ են
սարքում, ջրումը լողանում են, զբօսնում են և որ ամենագլխա-
ւորն է ձիով ջիրիթ են խաղում և մենամարտութեան ասպա-
րէզ են բանում: Հնուց սովորութիւն է դարձել և սրբու-
թեամբ էլ կատարւում է, որ Բասենի պոյեղոզ ժողովուրդը
բաժանւում է Ձերմիւլում երկու բանակի, որից ոչ մէկը չի
անցնիլ միւս բանակ, Ջիրիթը, մենամարտը կատարւում է

երկու հակառակ և մրցող բանակների ընտրեալներէր: Այդ հանդիսին ներկայ են լինում և Արդրումից եկած հարուստները, որ ջատագովում են երկու կողմի հերոսներին էլ և յաղթութեան ժամանակ իսկոյն կանգնում են բանակների մէջ, որ խառնակութիւն և կոխ չլինին:

— Կանայք նոյնպէս լինում են զխորաթում, բայց լինում են տղամարդկանցից յետոյ, այսինքն մայիսի 21 ից յետոյ: Նորա տանում են մատաղ, հաց, գաթայ և այլն: Այս տարի պատերազմն արգելք եղաւ:

— Ահա այդ մենամարտութեան հանդէսներին միշտ մասնակցում էր Կիրակոս փահլեանը և առաջին տեղն էր բռնում: Նա խիստ ուժեղ մարդ էր: Հայր՝ փ... հայր՝ ֆ... փահլեան. որ դաղթեց մեղանից: Գաղթելու ժամանակ փահլեանը տարաւ իւր հետ Ռուսաստան իւր ջրաղացի վերի բարը, որովհետեւ նորան բերել էր Լոռու քարահանքից և բերել էր մեծ չարչարանքով... վերջապէս Մամմազը:

Երբ Մամմազի պատմութիւնը պատուում էր Կիրակոս փահլեանի շուրջն, ես նորա անունը յիշեցի Բասենի գաղթի պատկերից, որ մի տարի առաջ պատմել էր ինձ Դարալագեանի Խաչիկ գիւղում Յակոբ Պետրոսեանը: Յիշեցի, որ կան գիւղացի (Կարենի մօտ) Մարտիրոս Վէրիլեանը, որ կտաւ հատի ձէթ ծախելու նպատակով, 1830 թուից առաջ, գալիս էր Ռուսաց սահմանները-Գիւմրի, Փամբակ և այլն և լրտեսութեան յանձնարարութեամբ վերադառնալով Կարին, բռնուել էր թուրք իշխանութիւնից, փախել էր բանտից և գիշերը հասել էր Մոնկերտ փահլեանի մօտ, որի օգնութեամբ և առաջնորդութեամբ նոյն գիշերն անցնում է Սողանլուի անտառը:

Յիշեցի նորից, որ փահլեանի ազդեցութեամբ և մասնակցութեամբ Մոնկերտի գաղթականները բնակութեան համար կանգ են առել Ալեքսանդրապոլու գաւառի Եղեանլար գիւղում և յետոյ նորա հետ միասին մի բանի գերդաստաններ մտադրուել են փախել ծածուկ նորից Մոնկերտ:

Երբ ես յայտնեցի Մամմազին, որ ճանաչում եմ միքանի Մոնկերտցի հայերի, որոնց թւում և Յակոբ Պետրոսեանին, Մամմազն ուրախութիւնից չգիտէր ինչ անէր: Նա հաղորդեց որ ինքը Յագօի հետ հասակակից է, մօտիկ ընկեր, և միասին այս հանդերձում հորթեր էինք արածացնում:

— Թուրք, հայ չէինք ջոկում իրարից մի գիւղ, մի հասա-

բազմութիւն էինք կազմում, հայերի ժամանակ մենք թուրքերու ընդամենը 40 տուն էինք, նորից շարունակեց Մամմադը, բայց նորանք իւրեանց շահերը մերից չէին ջնկում, օրինակ հայ ծըխաւէր քահանայ տէր Յակոբն, որ թաղուած է միւս հանգստարանում, Խոյ քեսանի մօտ, իւր հաշուով բերել տուեց վանքի աղբիւրը բոյոր գիւղացոց համար: Քոչելու բոպէին շատ արտաշարժ տեսարան էր, ընդհանուր լաց ու կոծ էր, կանայք, աղջիկունք, երիտասարդներ, հասակաւորներ հայերից և թուրքերից իրար գրկախառնած, չէին ուզում բաց թողնել միմեանց... հայի՛ֆ... հայի՛ֆ... նորանց գաղթելուց յետոյ նորանցից մնացած հոգերը մեզ վերայ թափի արին... մենք էլ ճարահատեալ համաձայնեցինք, վախենալով թէ մի գուցէ ուրիշ տեղերից մարդիկ բերեն բնակեցնեն, այժմ մեր հոդն այնքան շատ է, որ մեծ մասը՝ մնում է անմշակ պատմում էր Մամմադը:

Նորից անցնենք հնութիւնների: Ոչ պակաս տեղ են բռնում և Մօնկերտի պրերը, սփռուած՝ բերդի լանջերում և մանաւանդ Ջըգաւ ձորում: Ես հաշուեցի 12 տեղ, բացի այն պրերը, որոնք՝ քանդուկուց՝ թողել են միայն չնչին հեաքեր: Ջըգաւում կան լեռան մէջ այրեր, որոնք յարկերի նման դասաւորուած են իրար վերայ դէպի վեր, ընդհանուր բարձրութեամբ աւելի քան տասը սաժէն, այնպէս որ մինի առաստաղը միւսի յատակն է և հաղորդակցւում են իրար հետ յատակի կենդրոնական բոլորիկ անցքով: Ումանք ունին լուսանցքներ դէպի գետակը: Սորանց մասին աւանդութիւն չգիտեն:

Հին գիւղատեղիներից, բացի վերոյիշեալ Թոմնգուլից, յայտնի են հիւսիսում Բեօլա Ահմադ և Ջըգաւ ձորի բարձրավանդակում, գետակի աջ կողմում, Ջըգաւ գիւղը իւր աւերակ տնտեսներով և գերեզմանատնով հասարակ քարերից: Սորանից է ստացել ձորն իւր անունը: Հայերի ժամանակ, այստեղ երկու հայ ցանում էին առույտ (եօնջայ) իսկ այժմ թափի և վերին Մօնկերտցի մի թուրքի մօտ:

Հ. Ղ. Ալիշանը Ջըգաւն անուանում է Ջէկ և վերջինս խառնում է Ջաք գիւղի հետ ¹⁾: Երկու գիւղերն էլ բոլորովին տարբեր են թէ՛ տեղադրութեամբ և թէ՛ անունով: Ջըգաւը, Մօնկերտի մօտ է, իսկ Ջաքը Խան չայի վերայ, Ենիքեօյի մօտ, ինչպէս յառաջիւց տեսանք: Ջըգաւն ամենեւին չէ կոչւում Ջէկ իսկ Ջաք ուսերէն արտասանութիւն է թուրքերէն Ջեաք

¹⁾ Հ. Ղ. Ալիշան. «Այրարատ» էջ 36 և 38.

արտասանութեան, որ աղջատուած բուն հայկական շագ բառն է և գիւղի անունը:

Անպա Մասմազն իւրայիններով տարաւ ինձ գիւղն, ուր ջոյց տուաւ հայերի ծխական եկեղեցու տեղը, Ալիդաշի մօտ Բայրի չայի ձախ ափում. եկեղեցու հետք չկար, Գիւղի վերի մասում դեռ ևս Նոյնութեամբ կանգուն էր Կիրակոս փահլեանի ջրաղացն, կառավարութիւնից գնել էին երկու եղբարք Հասարաթ Կուրբան: Գիւղի ներքի մասում Մկոյ (Մկրտիչ—) բէհի ջրաղացն էր, որ արդէն պատկանում էր Նոյն գիւղացի ոմն Ահմադին: Տեսանք Մկոյ բէհի աւերակ տունն ու գոմը: Գոմի մասին Մամմադը յիշում էր, որ հարսանիքները միշտ այս գոմումն են կատարելիս եղել մեծութեան համար, ուր հայ և թուրք աղջկունք և աղայք պար էին բռնում մինչև լոյս և թէ ինքը Մամմադը; Յագօի հետ (Յակօբ Պետրոսեան) շատ է պար եկել պատեղ: Եւ այսպէս մի առ մի անուանացի գոյց էր տալի Մամմադը դաղթած հայերի տները, գոմերը, մարազներն և այլն:

Այսպէս վերջացաւ իմ այցս ներքին Մօնկերտին կամ ինչպէս թուրքերն են արտասանում Միշինկիրտ: Ենքըին է ասում այն պատճառով, որ հայերի գալութեւոյ յետոյ կադմուել էր դէպի վեր, արևելք, վերին Մօնկերտ՝ թուրք ընակիչներով, սակայն 1877 թուին իսպառ քայքայուած ոռոսաց ձեռքով, որովհետև ընակիչները բռնել և յանձնել էին Մուխտար փաշային ոմն քիւրդ դալի Հիւսէյինին, որ իբրև լրտես՝ մատաչափ նամակ էր տանում Լոռիս Մելիքովից Տէր Ղուկասովին: Դալի Հիւսէյինին Արզրում պէտք է կախէին, բայց մի հրաշքով ազատոււմ է լանտից և փախչում:

Իմ տեսած և այժմ նկարագրած գիւղերն ինձնից յետոյ ո՞րքան են կերպարանափոխուել, Աստուած իմ: Սրբասանում, Ենիքեօվում, Ջաքում, Կարաուրդանում՝ Մօնկերտում՝ և ուր գիւղերում, Բեռլինի դաշնագրութիւնից յետոյ, ընակեցրած են արդէն բացառապէս յոյն գիւղացիներով, որոնք իւրեանց կենցաղավարութեամբ միայն ծիծաղ են յարուցանում տեսնողի մէջ... ¹⁾

ԳԱՋԱԲԵՐՈՒՆԻ

¹⁾ Լ. Սարգսեան «Այց Թիւրքաց Հայաստանին».

(կը շարունակուի)